ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2025 թվականի N 197-Ա

ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության պահանջը.

որոշում եմ

1. Հաշվի առնելով մարզի մանկապարտեզների կարիքների համար գազօջախի սալերի ձեռքբերման հրատապությունը, ՀՀ կառավարության 17.07.2025թ. թիվ 977-Ն որոշմամբ հատկացված գազօջախի սալերի գնման ձևը փոխարինել ԷԱՃ ընթացակարգից ՀՄԱ ընթացակարգով և գնման գործընթացն իրականացնել հրատապության սկզբունքով՝ թղթային եղանակով:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումն իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ հրատապ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը:

ՓՈԽԱՐԻՆՈՂ ՏԵՂԱԿԱԼ Ն. ՂՈՒՇՉՅԱՆ

22.08.2025

X

ՆԱՐԵԿ ՂՈՒՇՉՅԱՆ

Подписано: GHUSHCHYAN NAREK 4007810273

2025 թ. օգոստոսի 22
ք. Իջևան